



## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ և ԶԱՐԳԱՅՈՒՄ

*Արդյունավետ նախադպրոցական կրթական ծառայությունների  
հիմնման ուղեցույց՝ նախատեսված գյուղական համայնքների  
ղեկավարների համար*

«Մեյվ դը չիլդրեն»

Երևան, 2013թ.

Հեղինակներ՝

**Ի. Սաղոյան**

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության տնօրեն

**Ի. Սարգսյան**

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության ծրագրերի  
իրականացման գծով ղեկավար

Ձևավորումը՝

**Ն. Սարգսյան**

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության գործառույթների և  
անվտանգության համակարգող

*Սույն ուղեցույցը մշակվել է «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից՝ «Նախաձեռնություն հանուն երեխայի կրթության և առողջության» ծրագրի շրջանակներում:*

## Բովանդակություն

Դպրոցահեն ՎՄՁԿ մոդել .....	4
Ինչու դպրոցահեն.....	5
Ինչպես ընտրել դասարանները.....	6
Ինչպիսի սկզբնական ներդրումներ կպահանջվեն .....	7
Ընթացիկ ծախսեր – ինչքան են դրանք.....	7
Ինչպիսի անձնակազմ է հարկավոր ՎՄՁԿ գործունեության համար .....	8
Ինչպիսի կրթական ծրագրեր պետք է առաջարկի ՎՄՁԿ-ն .....	9
Ինչպես հավաքագրել երեխաներ.....	9
Ինչ է ծնողական կրթությունը և ինչպես այն կազմակերպել.....	10
Որտեղից ստանալ մեթոդաբանական աջակցություն.....	11
Եզրափակիչ առաջարկություններ .....	12
Հավելված 1.1. Նախադպրոցական կրթության համար կահավորված դասասենյակների օրինակներ.....	13
Հավելված 1.2. Նախադպրոցական կրթության դասասենյակի կահույքի մոտավոր նախահաշիվը .....	14
Հավելված 2. Նախադպրոցական կրթության դասասենյակի գործունեության մոտավոր նախահաշիվը .....	15
Հավելված 3.1. Նախադպրոցական կրթության ուսուցչի (դաստիարակի) աշխատանքի նկարագիրը .....	16
Հավելված 3.2. Նախադպրոցական կրթության ուսուցչի օգնականի աշխատանքի նկարագիրը .....	18
Հավելված 4. Օգտակար ռեսուրսներ .....	19

## Նախաբան

Խորհրդային Միության փլուզման հետևանքով Հայաստանի տնտեսությունը զգալի վնասներ կրեց՝ լրջորեն վատթարացնելով սոցիալական, կրթական և առողջապահական ծառայությունները, որոնք մինչ այդ հանրամատչելի էին: Այս ամենի հետևանքով ամենաշատը տուժեց նախակրթական ուսուցման մատչելիությունն ու որակը: Ներկայումս, չնայած ՀՀ կառավարության, միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների գործադրած ջանքերին, շատ համայնքներ դեռևս ի վիճակի չեն ապահովելու վաղ մանկության զարգացմանն ուղղված ծառայություններ (ներառյալ վաղ տարիքի երեխաների խնամքը և նախադպրոցական կրթությունը): Խնդիրը հատկապես բարդ է փոքր գյուղական համայնքներում, որտեղ համայնքային բյուջեն չի կարող ապահովել լիարժեք գործող մանկապարտեզների և այն հաստատությունների գործունեությունը, որտեղ նախադպրոցական երեխաների թիվը մեծ չէ:

Եթե Դուք դեկավար եք մի գյուղական համայնքի, որը չի կարողացել ապահովել նախադպրոցական կրթություն և խնամք, ապա այս ուղեցույցը Ձեզ համար է:

Սույն ուղեցույցում ներկայացված են գաղափարներ այն մասին, թե ինչպես կարելի է գյուղական համայնքում հիմնել վաղ մանկության զարգացման կենտրոն (ՎՄԶԿ):

## Դպրոցահեն ՎՄԶԿ մոդել

ՀՀ կառավարությունը առաջնային է համարում երեխաների համար նախադպրոցական կրթության մատչելիության ապահովումը և բազմաթիվ օրենսդրական լուծումներ է առաջարկում կյանքի կոչելու վաղ մանկության զարգացումը (ՎՄԶ): Այսպիսով, ընդունվել են նախադպրոցական կրթությունը կանոնակարգող հետևյալ փաստաթղթերը.

- ՀՀ օրենքը կրթության մասին (1999),
- Նախադպրոցական կրթության զարգացման պետական ծրագիր (2000),
- ՀՀ օրենքը նախադպրոցական կրթության մասին (2005),
- Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագիր:

Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենքը հետաքրքրություն առաջացրեց ՎՄԶ այլընտրանքային մոդելների հանդեպ, որոնք ավելի են համապատասխանում իրականությանը և առկա կարիքներին, ինչպես նաև

Ֆինանսապես ավելի արդյունավետ են և իրագործելի: Բազմաթիվ կազմակերպություններ, ներառյալ՝ Համաշխարհային բանկը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, «Սեյվ դը չիլդրեն»-ը, «Քայլ առ քայլ»-ը և այլն, տարբեր համայնքներում փորձարկել են այս այլընտրանքային մոդելները:

Սույն ուղեցույցը ներկայացնում է դպրոցահեն ՎՄՁԿ ընդհանուր բնութագիրը և կենտրոններ հիմնելու համար համայնքների ղեկավարների կողմից ձեռնարկվելիք գործնական քայլերը:

## Ինչու դպրոցահեն

Ինչպես արդեն նշվեց, խորհրդային ժամանակաշրջանում նախադպրոցական ծառայությունները լայնորեն հասանելի էին: Գրեթե յուրաքանչյուր գյուղական համայնք ուներ լիարժեք գործող մանկապարտեզ, որտեղ երեխաները կարող էին ոչ միայն հաճախել նախադպրոցական դասերին, այլ նաև անց կացնել գրեթե ամբողջ օրը: Մանկապարտեզում երեխաները կարող էին քնել և սնվել օրական 3-4 անգամ: 1996թ. տեղական ինքնակառավարման օրենքի ընդունման արդյունքում ՎՄՁ-ի համար պատասխանատու դարձավ համայնքը և այդ ժամանակից ի վեր ՎՄՁ-ն ծառայությունները սկսեցին ֆինանսավորվել տեղական բյուջեից և ծնողների կողմից վճարվող գումարներից:

Այնուամենայնիվ, տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ չեն կարողանում ապահովել մանկապարտեզների գործունեությունը. չնայած շատ գյուղական համայնքներում մանկապարտեզների շինությունները դեռևս գոյություն ունեն, դրանց վերաբացումը լուրջ ներդրումներ է պահանջում, ինչն անհասանելի է հատկապես փոքր գյուղական համայնքների համար: Ավելին, ինչպես հայտնի է, վերջին տարիների ընթացքում գյուղական համայնքների բնակաչության թիվը զգալիորեն նվազել է՝ կապված արտագաղթի և ուրբանիզացիայի հետ: Այս ամենը հանգեցրեց հատկապես նախադպրոցական տարիքի երեխաների թվի կտրուկ նվազմանը, ինչը լիարժեք գործող մանկապարտեզի գործունեությունը դարձրեց ֆինանսապես անարդյունավետ, քանի որ մանկապարտեզի ամենօրյա լիարժեք գործունեությունն ապահովելու համար կահանջվում են մի շարք աշխատակիցներ (տնօրեն, դաստիարակ-ուսուցիչներ, բուժքույրեր, հավաքարարներ, մեթոդաբանության մասնագետ և այլն), ջեռուցման, էլեկտրաէներգիայի, անվտանգության և սպասարկման հետ կապված այլ ծախսերի վճարում, ինչպես նաև սննդի, սնուցման և քնի համար նախատեսված հարմարություններ: Այն համայնքներում, որտեղ երեխաների թիվը

քիչ է, վերոնշյալ ծախսերը ֆինանսապես անհասանելի են և չեն էլ կարող ապահովվել ծնողների կողմից վճարվող գումարների միջոցներով:

Ներկայացվող մոդելն առաջարկում է հիմնել կեսօրյա ՎՄՁ կենտրոն տեղական դպրոցի տարածքում: Այս պարագայում պետք է համաձայնություն ձեռք բերվի դպրոցի տնօրենի հետ՝ ՎՄՁԿ-ին մեկ կամ երկու դասարան տրամադրելու նպատակով: Այս մոտեցումը կիրառելը ունի մի շարք առավելություններ: Դրանք են.

- կառավարության աջակցությունը այն համայնքներին, որտեղ լիարժեք գործող մանկապարտեզի ապահովումը գործնականում հնարավոր չէ,
- սպասարկման ծախսերը, ներառյալ՝ մաքրման, էլեկտրաէներգիայի, ջեռուցման և անվտանգության ծախսերը, կվճարվեն դպրոցի բյուջեից՝ զերծ պահելով համայնքային բյուջեն որևէ հավելյալ ֆինանսական ծախսից,
- համայնքները կարող են դիմել ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի «Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության կազմակերպման ծախսերը ֆինանսավորելու մասին» N 1427-Ն որոշման ՎՄՁ անձնակազմի ծախսերը վճարելու համար ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով:

## Ինչպես ընտրել դասարանները

Դասարանները պետք է ընտրվեն դպրոցի ղեկավարության հետ խորհրդակցության և համաձայնության հիման վրա, այդ պատճառով մենք խրախուսում ենք տնօրենի հետ ստեղծել ամուր գործընկերություն և նրա կողմից ստանալ ՎՄՁ նախաձեռնության հավանությունը: Ցանկալի է, որ ՎՄՁԿ բաղկացած լինի 1-2 դասարաններից (մեկ դասարան և մեկ խաղասենյակ) և ունենա հոսող ջրով առանձին սանհանգույց՝ փոքր տարիքի երեխաների համար հարմարեցված սարքավորումներով: Դասարանը (դասարանները) պետք է լինեն լուսավոր, մաքուր և նախընտրելի է, որ գտնվեն դպրոցի առաջին հարկում: Դասարանները պետք է հարմարեցված լինեն հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

Ինչպես արդեն նշվեց, դպրոցահեն ՎՄՁԿ գաղափարը ենթադրում է, որ դասարանները պետք է հարմարեցված լինեն հինգից-վեց տարեկան 20-24 երեխայի համար և միջինում գործեն օրական չորս ժամ: Մեր փորձը ցույց է տալիս, որ որոշ համայնքներում կան նախադպրոցական կրթության և խնամքի կարիք ունեցող վերոնշյալ տարիքի ավելի շատ երեխաներ: Այս պարագայում համայնքը կարող է ընտրել հարցին լուծում տալու հետևյալ երկու տարբերակներից մեկը.

- 1) մեկի փոխարեն հիմնել երկու դասարան, որոնք զուգահեռ կրթություն և խնամք կապահովեն՝ յուրաքանչյուրը 20-24 երեխայի համար,
- 2) կազմակերպել հաճախելիության երկու հերթ՝ յուրաքանչյուրը 20-24 երեխայի համար:

Ակնհայտ է, որ հիմնման և գործունեության համար նախատեսված ծախսերը երկրորդ տարբերակի դեպքում ավելի քիչ կլինեն:

## Ինչպիսի սկզբնական ներդրումներ կպահանջվեն

ՎՄԶ կենտրոն հիմնելու համար պահանջվող սկզբնական ներդրումները կարող են ներառել հետևյալը.

- **ՎՄԶ դասարանի** (դասարանների) և սանհանգույցի վերանորոգում
- Կահույքի, սարքավորումների և պարագաների գնում (առաջարկված կահույքի և սարքավորումների հավաքածուն և ծախսերի միջին հաշվարկը տե՛ս Հավելված 1.1 և 1.2-ում): Խորհուրդ է տրվում հնարավորության դեպքում ՎՄԶ դասարաններում ապահովել հինգից-վեց տարեկան երեխաների համար հարմարեցված կահույք՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքները ևս: Կահույքը պետք է լինի գունազեղ և ֆունկցիոնալ՝ հարմար լինելով թե՛ անհատական և թե՛ խմբակային աշխատանքների համար:
- Գրքերի, մեթոդաբանական նյութերի, նախնական գրենական պարագաների հիմնապաշարի գնում: Գրենական պարագաները կհամալրվեն ամսական կտրվածքով ծնողների կողմից վճարվող գումարներից:

## Ընթացիկ ծախսեր – ինչքան են դրանք

Եթե որոշել եք հիմնել ՎՄԶ, Դուք պետք է գիտակցեք, որ սկզբնական ծախսերից զատ կլինեն նաև ընթացիկ ծախսեր: Դպրոցահեն ՎՄԶ առավելությունն այն է, որ դպրոցը կծածկի որոշ ընթացիկ ծախսեր (ինչպիսիք են ջեռուցումը, ջուրը, էլեկտրաէներգիան և մաքրությունը), և միայն մնացյալ ծախսերն են (անձնակազմի աշխատավարձ և առօրյա ծախսերը), որ պետք է հայթայթվեն այլ աղբյուրներից (առաջարկվող գործունեության ծախսերի միջին հաշվարկը տե՛ս Հավելված 3-ում):

Քանի որ նախադպրոցական այլընտրանքային ծառայության ստեղծումը համահունչ է ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ ԿԳՆ

Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագրին և 'Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության կազմակերպման ծախսերը ֆինանսավորելու մասին' ՀՀ կառավարության 04.11.2010թ-ի N 1427-Ն որոշմանը, ԿԳՆ-ը հաջորդ տարիների բյուջետային գործընթացի շրջանակներում ներառում է նոր ստեղծված նախադպրոցական կրթության կենտրոնների գործունեությանն ուղղված ֆինանսական ծախսերը:

Այսիպիսով, առաջիկա տարիների ընթացիկ ծախսերը կհոգա ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

### Ինչպիսի անձնակազմ է հարկավոր ՎՄԶԿ գործունեության համար

Անձնակազմի թվաքանակը կախված կլինի նախադպրոցական կրթությունն ապահովելու համար ընտրված դասարանների քանակից: Այնուամենայնիվ, կարևոր է հաշվի առնել, որ յուրաքանչյուր դասարան կպահանջի առնվազն երկու կես դրույքով աշխատող (օրական չորս ժամ աշխատաժամանակով):

- Նախադպրոցական կրթության մանկավարժ. պետք է լինի համալսարանական համապատասխան կրթությամբ անձնավորություն, ով համապատասխանում է երեխաների հետ աշխատելու ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված որակավորումներին: Այս անձը դասընթացները կվարի ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրված ծրագրի համաձայն և կօգտագործի հատուկ գրականություն և գործողությունների ուղեցույց:
- Մանկավարժի օգնական. այս անձը պետք է օգնի ուսուցչին վարելու նախադպրոցական կրթությունը և խնամքը: Նա, օրինակ, կօգնի բաշխել խմբային գործողությունների համար նախատեսված պարագաները, կմոբիլիզացնի երեխաներին և կօգնի նրանց աշխատանքների կատարման ժամանակ, կուղեկցի երեխային գուգարան և, անհրաժեշտության դեպքում, կօգնի նրան:

Աշխատանքի ընդհանուր բնութագրերը տրամադրված են Հավելված 3.1 և 3.2-ում: Մենք խրախուսում ենք, որպեսզի, թե՛ ուսուցիչը և թե՛ ուսուցչի օգնականն ընտրվեն մրցույթային հիմունքներով և նախքան իրենց բուն պարտականություններին անցնելը մասնակցեն վերապատրաստման հատուկ դասընթացներին: Կան բազմաթիվ կազմակերպություններ, որոնք կարող են առաջարկել կարճաժամկետ դասընթացներ ՎՄԶԿ անձնակազմի համար, ներառյալ՝ Ազգային կրթության



ինստիտուտը, «Քայլ առ քայլ» հիմնադրամը և այլն: Շատ կարևոր է, որ առաջարկվող դասընթացը ներառի հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատելու համար նախատեսված խորհուրդներ և առաջարկներ:

## Ինչպիսի կրթական ծրագրեր պետք է առաջարկի ՎՄՁԿ-ն

Նախադպրոցական կրթությունը և խնամքը կարող է կազմակերպվել՝ օգտագործելով տարբեր ուսումնական ծրագրեր: Կարևոր է հիշել, որ այս դասընթացներին չպետք է վերաբերվել որպես դպրոցական ուսուցման, և այդ պատճառով ուսուցման հիմնական մեթոդը պետք է հիմնված լինի «սովորել խաղալու միջոցով» գաղափարի վրա:

Կարող է առաջարկվել կրթական ծրագրի երկու տարբերակ.

- Երկու կամ երեքամսյա հատուկ դասընթաց՝ նախատեսված վեց տարեկան երեխաների համար, որոնք շուտով հաճախելու են տարրական դպրոց: Այսպիսի դասընթացներ վարելու համար ուսուցիչների հիմնական ուղեցույցը կարող է լինել Ազգային կրթության ինստիտուտի կողմից մշակված «Հինգից վեց տարեկան երեխաների համար նախադպրոցական կրթության այլընտրանքային մոդելներ»-ը: Այս դասընթացները պետք է անցկացվեն կրթական տարվա սկզբից մեկից չորս ամիս առաջ՝ համոզվելու, որ երեխաները լավ են պատրաստված և ունեն համապատասխան գիտելիքներ առաջին դասարան հաճախելու համար:
- Նախադպրոցական կրթություն, որը կարող է ապահովվել ամբողջ տարվա ընթացքում: Առաջարկվող հավելյալ մեթոդաբանական գրականություն և ուղեցույց կարող էք գտնել Հավելված 4-ում: Նյութը կօգնի ուսուցչին կազմակերպել և վարել երկարատև դասընթացներ:

## Ինչպես հավաքագրել երեխաներ

Նախադպրոցական կրթության մատչելիության խնդիր ունեցող գրեթե բոլոր համայնքներում երեխաների հավաքագրումն, ըստ էության, բարդություններ չի առաջացնում: Այնուամենայնիվ, երբեմն համայնքապետերը, ուսուցիչները և ղեկավարները խոչընդոտի են հանդիպում, քանի որ ծնողները հաճախ հրաժարվում են իրենց երեխաներին տանել մանկապարտեզ՝ պատճառաբանելով, որ տանը ունեն խնամող (սովորաբար տատիկ կամ տարիքով ավելի մեծ քույր կամ եղբայր): Կարևոր է փոքր տարիքի երեխա ունեցող ընտանիքներին ճիշտ կերպով բացատրել վաղ մանկության կրթության ազդեցությունը երեխայի ֆիզիկական,

զգացմունքային և հոգեբանական զարգացման վրա:

Առաջին հերթին պետք է նշել, որ խմբային ուսուցումը կարևոր է նախադպրոցական տարիքի երեխաների համար, քանի որ կօգնի նրանց ավելի հեշտ շփվել և հաջողակ լինել տարրական դպրոց հաճախելիս: Չնայած ՎՄԶԿ գլխավոր նպատակն է երեխաներին նախապատրաստել դպրոց հաճախելուն, այս դասընթացները դրական ազդեցություն են ունենում բոլոր երեխաների վրա, ներառյալ՝ հաշմանդամություն և վարքային խնդիրներ ունեցող երեխաները: Փաստացի տվյալները խոսում են այն մասին, որ այն երեխաները, որոնք հաճախում են մանկապարտեզ, ավելի հաջողակ են լինում դպրոցում:

Հետևաբար, որպեսզի հինգից-վեց տարեկան երեխաները ներգրավվեն նախադպրոցական կրթության մեջ, ուսուցիչները և համայնքի ղեկավարությունը պետք է անհատական հանդիպումներ կազմակերպեն ընտանիքների հետ՝ բացատրելու դասընթացների կարևորությունը, պայմանները, ակնկալվող ուսումնական արդյունքները, աշխատանքային ժամերը և այլ մանրամասներ:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է վարի հաճախելիության գրանցամատյան և երեխայի կատարողականության մասին անհրաժեշտ գրառումներ կատարի:

## Ինչ է ծնողական կրթությունը և ինչպես այն կազմակերպել

Վաղ մանկության զարգացման աշխատանքները ենթադրում են գործընթացում ծնողների՝ հատկապես դասընթացներին չհաճախող փոքր տարիքի երեխա ունեցողների ներգրավվածությունը: Արդյունավետ ծնողական կրթությունն օգնում է 0-6 տարեկան երեխաների ծնողներին ձեռք բերել անհրաժեշտ գիտելիք և հմտություններ՝ ծնողավարման խնդիրներին լուծում տալու նպատակով:

«Մեյվ դը չիլդրեն»-ը ծնողական կրթության դասավանդողների, ուսուցիչների և ծնողների համար ուղեցուցային նյութեր է մշակել: Դրանք են.

- *«Ծնողավարման կրթություն», մեթոդական ուղեցույց նախադպրոցական կրթության ուսուցիչների/ ծնողական կրթության դասավանդողների համար և*
- *«Ես գիտեմ իմ երեխային, իսկ դու՜», ձեռնարկ ծնողների համար:*

Ուղեցույցը մշակվել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և «Քայլ առ քայլ» հիմնադրամի ծնողական կրթության մոտեցման հիման վրա և հարստացվել այլ համապատասխան տեղեկատվությամբ:

Վերոնշյալ նյութերը նպատակ ունեն աջակցելու գյուղական համայնքներին իրենց ՎՄՁԿ-ում կազմակերպել քիչ ծախսատար գործողություններ՝ փոքր տարիքի երեխաների ծնողներին ներգրավելով ոչ ֆորմալ դասընթացների մեջ: Դասընթացն անդրադառնում է երեխայի սնուցման, զարգացման և խնամքի էական խնդիրներին: Ծնողները ծանոթանում են արդյունավետ ծնողական ռազմավարության հետ՝ ավելի լավ հասկանալով երեխայի զարգացումը, սթրեսի կառավարումը, կարգապահության հանդեպ դրական մոտեցումը, գործնական հաղորդակցությունը և լսելու ունակությունը: Դասընթացն օգնում է նաև հարաբերություններ ստեղծել և հաղորդակցվել այլ ծնողների հետ, սովորել ուրիշներից և կիսվել սեփական մտահոգություններով և փորձով:

Մեր առաջարկն է ծնողավարման դասընթացներն անցկացնել շաբաթական մեկ անգամ, 16-20 ծնողի համար: Դասերը կարող են անցկացվել ՎՄՁԿ ուսուցչի կողմից, ով կվարի դասընթացը ՎՄՁԿ աշխատանքային ժամերից հետո: Դասավանդման ծրագրի մանրամասն ուղեցույցը կարող էք գտնել ուսուցիչների համար մշակված վերոնշյալ ուղեցույցում: Ուսուցչի ուղեցույցը, ինչպես նաև ծնողավարման կրթության օժանդակ նյութերը կարող են տրամադրվել «Մեյվ դը չիլդրեն»-ի կողմից, ըստ պահանջի:

## **Որտեղից ստանալ մեթոդաբանական աջակցություն**

Ինչպես այս ուղեցույցում բազմիցս նշվել է, ՎՄՁԿ-ի ստեղծման նախաձեռնող խմբերի համար գոյություն ունեն մեթոդաբանական աջակցություն տրամադրող բազմաթիվ աղբյուրներ: Բացի Հավելված 5-ում թվարկված տարբեր աղբյուրներից, կարևոր է նկատի ունենալ նաև Գիտության ազգային ինստիտուտը՝ որպես դպրոցահեն ՎՄՁԿ կազմակերպելու հարցում ցանկացած մեթոդաբանական աջակցություն տրամադրող աղբյուր:

## Եզրափակիչ առաջարկություններ

Գյուղական համայնքներում նախադպրոցական կրթության կենտրոնի հիմնումը հավակնոտ, բայց վեհ նպատակ է, որն, անկասկած, կարդարացնի իրեն: Այն պահանջում է համայնքի ղեկավարի և դպրոցի տնօրենի լուրջ նվիրվածություն և չի կարող հաջողության հասնել առանց երկուսի գործընկերության: Ծնողներն առանցքային դեր են խաղում նախադպրոցական կրթության կենտրոնի բացման քարոզչության գործում: Բացի դրանից, նրանք նաև մեծ դեր ունեն նախադպրոցական կրթության կենտրոնի ծրագրի փաստացի իրագործման մեջ և պետք է հնարավորինս օգնեն ղեկավարներին:

Տարբեր կողմերին նախադպրոցական կրթության կենտրոնի հիմնման գործում ներգրավելու և մոբիլիզացնելու մի միջոց կարող է հանդիսանալ ծնողների, ուսուցիչների և գյուղապետարանի աշխատակիցների ներգրավմամբ հանձնաժողովի ստեղծումը՝ անհրաժեշտ աշխատանքների մանրամասները քննարկելու և ռեսուրսները մոբիլիզացնելու նպատակով:

Նախադպրոցական կրթության կենտրոնի կատարողականության, երեխաների հաճախելիության և ծնողների՝ մատուցվող ծառայություններից բավարարվածության պարբերական մշտադիտարկումը կարևոր է կենտրոնների արդյունավետությունը գնահատելու համար: Բազմաթիվ խմբերի պատկերացումներն արտացոլելու նպատակով նախադպրոցական կրթության կենտրոնի կատարողականության մոնիթորինգի և գնահատման գործընթացում ցանկալի է ներգրավել նաև ծնողներին:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### Հավելված 1.1. Նախադպրոցական կրթության համար կահավորված դասասենյակների օրինակներ



**Հավելված 1.2. Նախադպրոցական կրթության դասասենյակի կահույքի մոտավոր նախահաշիվը**

Կահույք	Չափի միավորը	Քանակը	Ամսական/առանց ԱԱՀ-ի	Ընդհամենը/առանց ԱԱՀ-ի
Գրատախտակ	հատ	1	16,000	16,000
Մանկական սեղան/աթոռի հավաքածու նախատեսված 6 երեխայի համար	հավաքածու	4	80,500	322,000
Խաղալիքների պահարան	հատ	1	70,000	70,000
Գրասեղան	հատ	1	35,000	35,000
Գրքերի պահարան	հատ	1	40,000	40,000
Կոշիկների պահարան	հատ	1	40,000	40,000
Կախիչ	հատ	2	12,000	24,000
Ծալովի աթոռներ ծնողների համար	հատ	15	10,000	150,000
Ուսուցչի աթոռ	հատ	2	15,000	30,000
<b>Ընդամենը</b>				<b>727,000</b>
Մեթոդական նյութեր, մանկական գրականություն	ամիս		30,000	30,000

**Հավելված 2. Նախադպրոցական կրթության դասասենյակի  
գործունեության մոտավոր նախահաշիվը**

	Չափի միավորը	Քանակը	Ամսական/ առանց ԱԱՀ-ի	Տարեկան/ առանց ԱԱՀ-ի
<b>Աշխատակազմ</b>				
Դաստիարակ	միավոր	1	60,000	720,000
Դաստիարակի օգնական	միավոր	1	45,000	540,000
<b>Ընդամենը /առանց գործատուի մասով վճարի/</b>			<b>105,000</b>	<b>1,260,000</b>
Գրենական պիտույքներ	ամիս		7,000	84,000
<b>Ընդամենը</b>			<b>112,000</b>	<b>1,344,000</b>

### Հավելված 3.1. Նախադպրոցական կրթության ուսուցչի (դաստիարակի) աշխատանքի նկարագիրը

Նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել տարվա երեք և/կամ տաս ամիսների ընթացքում (ամառային արձակուրդների երկամսյա ընդմիջումով) մեկ ուսուցչի կողմից, որին կաջակցի մեկ օգնական: Նախադպրոցական կրթությունը նախատեսված է հինգից վեց տարեկան երեխաների համար շաբաթական հինգ օր և օրական չորս ժամ տևողությամբ:

Ընտրված ուսուցիչները և օգնականները պետք է վերապատրաստվեն նախադպրոցական կրթության ազգային ծրագրի շրջանակներում ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի մասնագետների կողմից: Ընտրված ուսուցիչները պետք է անցնեն նաև վերապատրաստում՝ ծնողական կրթության դասընթացներ վարելու վերաբերյալ:

#### I. Աշխատանքի ընդհանուր նկարագիրը

Դաստիարակը պլանավորում և կազմակերպում է հինգից վեց տարեկան երեխաների ուսուցումն ու դաստիարակությունը՝ կրթության պետական չափորոշիչներին համապատասխան: Կազմակերպում և անցկացնում է ծնողական կրթության դասընթացներ՝ մինչև վեց տարեկան երեխաներ ունեցող ծնողների համար, շաբաթական մեկ անգամ:

#### II. Հիմնական պարտականություններն են՝

1. Կազմակերպել և անցկացնել նախադպրոցական կրթություն՝ հինգից վեց տարեկան երեխաների համար, երկու և/կամ տաս ամիսների ընթացքում, օրական չորս ժամ տևողությամբ.
  - Իրականացնել կրթական ծրագրեր՝ ուսումնական պլանին և կրթական գործընթացին համապատասխան, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
  - Ապահովել ուսումնա-նյութական բազայի պահպանման և համալրման հաշվառումը, սանիտարահիգիենիկ ռեժիմի պահպանությունը:
  - Պլանավորել և կազմակերպել երեխաների կենսագործունեությունը, նրանց ուսուցումն ու դաստիարակությունը՝ կրթության պետական չափորոշիչներին համապատասխան:
  - Կատարել ամենօրյա աշխատանք երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման և հարմարունակության /ադապտացիայի/ համար: Մաների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրմամբ պլանավորել և անցկացնել նրանց հետ շտկողական, զարգացման աշխատանք:



- Աշխատանքներ տանել երեխաների վարքի շեղման, վնասակար սովորությունների վերացման ուղղությամբ:
  - Ուսումնասիրել սաների անհատական ունակությունները, հետաքրքրությունները և հակումները, նրանց ընտանեկան և կենցաղային պայմանները:
2. Համայնքի բուժաշխատողների հետ համատեղ ապահովել սաների առողջության պահպանումը և ամրապնդումը, անցկացնել նրանց հոգեբանական, ֆիզիկական զարգացումը խթանող միջոցառումներ, պատասխանատու լինել նրանց կյանքի և առողջության համար:
  3. Կազմակերպել և վարել ծնողական կրթության դասընթացներ մինչև վեց տարեկան երեխաներ ունեցող ծնողների համար:
  4. Համագործակցել սաների ծնողների կամ նրանց խնամակալների հետ:

### **III. Անհրաժեշտ որակավորում և հմտություններ**

- Բարձրագույն մասնագիտական կրթություն /բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս/:
- Նախադպրոցական և / կամ հիմնական կրթական հաստատությունում առնվազն մեկից երեք տարի աշխատանքային փորձ:
- Դաստիարակչական աշխատանքի տեսության և մեթոդիկայի իմացություն:
- Մանկավարժության, հոգեբանության, երեխաների տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, աշխատանքի անվտանգության, սաների կյանքի և առողջության պահպանման կանոնների իմացություն:
- Կրթությանն առնչվող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի, դաստիարակչական հարցերի և պետական չափորոշիչների իմացություն (ցանկալի է):
- Կազմակերպչական և հաղորդակցման հմտություններ:
- Երեխաների նկատմամբ հոգատարության դրսևորում:

## Հավելված 3.2. Նախադպրոցական կրթության ուսուցչի օգնականի աշխատանքի նկարագիրը

Նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել տարվա երեք և/կամ տաս ամիսների ընթացքում (ամառային արձակուրդների երկամսյա ընդմիջումով) մեկ ուսուցչի կողմից, որին կաջակցի մեկ օգնական: Նախադպրոցական կրթությունը նախատեսված է հինգից վեց տարեկան երեխաների համար շաբաթական հինգ օր և օրական չորս ժամ տևողությամբ:

Ընտրված ուսուցիչները և օգնականները պետք է վերապատրաստվեն նախադպրոցական կրթության ազգային ծրագրի շրջանակներում ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի մասնագետների կողմից:

### I. Աշխատանքի ընդհանուր նկարագիր

Դաստիարակի օգնականն ապահովում է հինգից վեց տարեկան երեխաների խնամքը, դասասենյակների սանիտարական հիգիենիկ պայմաններինը և օգնում է դաստիարակին իր պարտականությունների իրականացման ընթացքում:

### II. Հիմնական պարտականություններն են՝

- Աջակցել ուսուցչին նախադպրոցական կրթությունը կազմակերպելու և անցկացնելու գործընթացում:
- Համայնքի բուժաշխատողների աջակցությամբ ապահովել սաների առողջության պահպանումը և ամրապնդումը:
- Ապահովել երեխաների տարրական խնամքն ու դասասենյակների մաքրությունը:
- Համագործակցել սաների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ:

### III. Անհրաժեշտ որակավորում և հմտություններ

- Միջին-մասնագիտական կամ միջնակարգ մասնագիտական կրթություն մանկավարժության կամ հարակից այլ ոլորտներում:
- Նմանատիպ աշխատանքային փորձի առկայություն:
- Ստեղծագործական ունակությունների առկայություն:
- Կազմակերպչական և հաղորդակցման հմտություններ:
- Երեխաների նկատմամբ հոգատարության դրսևորում:

## Հավելված 4. Օգտակար ռեսուրսներ

[www.edu.am](http://www.edu.am)

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2008-2015  
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

<http://edu.am/DownloadFile/1494arm-Microsoft Word - ECD-VERJNAKsAN.doc.pdf>

ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈՂԵԼՆԵՐՈՎ 5-6 ՏԱՐԵԿԱՆ  
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

<http://edu.am/DownloadFile/4105arm-5-6 taerekaniyxecuyc.pdf>

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

<http://edu.am/DownloadFile/4349arm-Norhramanchaporoshich-257.pdf>

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՇԱՐՔԻ ՄԱՍՅԱՆԻ  
ՁԵՎԱԹՈՒՂԹԸ, ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ՝

<http://edu.am/DownloadFile/4453arm-Sharjmankapartez-1.pdf>

[www.aniedu.am](http://www.aniedu.am)

Նախադպրոցական առարկաների նյութերի փաթեթներ

<http://aniedu.am/trainings/moduls/126-2011-02-06-22-16-17>

Նախաշավիղ 2011

<http://aniedu.am/magazines/2011/222-nakhashavigh2011>

[www.armedu.am](http://www.armedu.am)

<http://www.unicef.org/armenia>

[www.moh.am](http://www.moh.am)

<http://impoqrik.am/>

<http://armparents.com/>

<http://www.mayrik.am/>

<http://www.hogeban.info/>

<http://armmix.ru/referat/12--.html>

<http://www.mankik.am/>